

Հետաքրքրական է վկայությունը թէ «Արեւելեան մի շարք ապրանքները Լվովում անուանում էին ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ եւ այդ անունով էլ արձանագրում էին զանազան ցուցակադրութեանց եւ առեւտրական գործարկութեանց ժամանակ: Դրանք նախ եւ առաջ պերճանքի առարկաներ էին, որոնց վրայ Արեւելքը դրեր էր իր վառ երեւակայութեանը եւ նուրբ ճաշակի դրոշմը. — գորգեր, ոսկեհիւս կրտսրներ, նկարուն զարդարանքներ ու կտորներ, զէնքեր՝ զարդարուած աղնիւ փորանկարներով ու թանկագին քարերով»<sup>(19)</sup> եւն.: Այլուր կը կրկնուի թէ «Խոնչ ասես, որ չէին ուզում ունենալ լեհ մեծատունները Արեւելքի հագուելու իրերից կամ թանկագին արտադրութիւններից — գորգեր, ձիու սարք, յովաղի մորթ, ոսկեկայմ զէնք՝ զարդարուած թանկագին քարերով եւ այլն: Եւ այդ ամէնը բոլորից աւելի լաւ կարող էին հայթայթել նրանց հայերը: Շատ յաճախ լեհական թագուհիները հայերին յատկապէս ուղարկում էին Արեւելք ձեռք բերելու ոսկեթելով զարդանկարուած գորգեր, չքեղ վրաններ եւն.»<sup>(20)</sup>: Արդարեւ հոս սկսեք է փնտռել Բոլոնէզ կոչուած գորգերու ծագումը, զոնէ սկզբնապատճառը: Հայ գորգի վաճառականները գոհացնելու համար Լեհ արքունիքի եւ աղետականութեան պահանջները՝ նախ Արեւելքէն եւ հետզհետէ Լեհաստանի մէջ ալ զանոնք կ'արտադրէին: Բոլոնէզ կոչուած մետաքսահիւս ժէ դարու գորգերը՝ հայ արհեստւորներու ձեռքի գործերն էին, թէեւ Տր. Ֆ. Ռ. Մարթին կը կարծէ որ անոնք բերուած են Հերաթէն (Պարսկաստան), բայց այս կարծեաց դէմ շատ մը առարկություններ կան, մինչ անդին այդ գորգերուն «Բոլիշ» կամ «Բոլոնէզ» անունը անտարակուսելի կերպով ցոյց կու տայ Լեհաստանը՝ իբր անոնց գործուելուն հայրենիքը: Նոյնիսկ Mr. Robinson իր Eastern Carpets աշխատութեան մէջ կը հաստատէ որ այդ գորգերը հիւսուած են «Mersherski անունով Լեհի մը շնորհիւ Պարսկաստանէն Լեհաստան բերուած Պարսիկներէ»: Սակայն ուրիշ գրող մը, William H. Mc Cleary, քիչ մը աւելի մանրամասնութիւն տալով կը գրէ. «Նախապէս անոնք («Բոլիշ» գորգերը) նուիրուած էին, 1757ին Լեհաստանի Sluck քաղաքին մէջ Mazardskiի հաստատած ոտայններուն, ան հաւանաբար հայ ծագում ունէր, ու շատ տարիներ Արեւելքի մէջ անցուցած էր: Այս ճարտարարուեստը, որուն մասին կարգ մը փաստեր կան ըսելու համար որ Արեւելեան հիւսողներէ գործուած է, նշանաւոր էր իր մետաքս դօտիներուն, ծագկեալ թուրք եւ

է Indicta Inud Civil XXI, էջ 1964, XXII, էջ 32-34: Որքան ցանկալի պիտի ըլլար եթէ Լեհագէտ-Հայագէտ մը ամբողջութեամբ թարգմանելով հայերէն հրատարակէր Indicta Inud Civil եւ Acta Consuli վաւերագրութեանց ընդարձակ հաւաքածոններուն հայոց վերաբերող այս առաջնակարգ վաւերաթուղթերը, որոնք այլուստ բոլորովին անմատչելի են մեզի: Ինծի համար տարիա ամենագովելի ձեռնարկներէն մին պիտի նկատուէր:

<sup>(19)</sup> «Հայրենիք» ամսագիր, է տարի, թիւ 10, էջ 92:

<sup>(20)</sup> Անդ, թիւ 11, էջ 119: